

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԱԿՈՎԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Կրակովի մանկավարժական համալսարնը Լեհաստանի ամենամեծ և ամենահին մանկավարժական համալսարաններից է:

Ս.թ. ապրիլի 23-ից 29-ը Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում ԳԿՄԿ պատվիրակությունը այցելեց Կրակովի մանկավարժական համալսարան հետևյալ կազմով՝ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյան, «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոսներ Դավիթ Պիպոյան, Գայանե Ներսիսյան և Վահագն Մուրադյան:

Ապրիլի հանդիպման առաջին օրը, հանդիպում տեղի ունեցավ Կրակովի մանկավարժական համալսարան աշխարհագրության ինստիտուտի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որտեղ կողմերը ներկայացրեցին իրենց բուհերը և քննարկեցին համագործակցության խորացման ուղիները: Այնուհետև կազմակերպվեցին այցեր մասնագիտական լաբորատորիաներ:

Հանդիպման երկրորդ հատվածում «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոս, «Համալիր գեոէկոլոգիական քարտեզագրում» առարկայի դասախոս Վահագն Մուրադյանը դասախոսություն կարդաց Կրակովի մանկավարժական համալսարան աշխարհագրության ինստիտուտի

մագիստրատուրայի ուսանողների համար «ՄՏՀ և հեռագնման տվյալների օգտագործումը լանդշաֆտաէկոլոգիական հետազոտություններում» թեմայով: Դասախոսության ընթացքում Վահագն Մուրադյանը ներկայացրեց տիեզերական լուսանկարների նախնական մշակման հիմնական մեթոդները և առցանց հարթակներում տարածական տվյալների վերլուծության հնարավորությունները:

Նույն օրը ԳԿՄԿ պատվիրակությունը նաև այցելեց Կրակովի ագրարային համալսարան՝ գիտության և կրթության ոլորտում համագործակցության ուղիներ նախանշելու նպատակով: Կրակովի ագրարային համալսարանի սննդի ռիսկերի գնահատման ամբիոնի օրինակով ուսումնասիրեցին գիտության և կրթության հաջողված սիներգիզմի ուղիները: Այցի ընթացքում ներկայացվեցին սննդի քիմիայի և քիմիական ռիսկերի գնահատման ոլորտում վերջին ձեռքբերումները և ձեռք բերվեց պայմանավորվածության կազմակերպել համատեղ սեմինար ռիսկերի գնահատման ոլորտում հայկական փորձի ներկայացման համար:

Այցի երկրորդ օրը մեկնարկեց Կրակովի մանկավարժական համալսարանի արտաքին կապերի վարչությունում, որտեղ կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին ընդլայնել համագործակցության շրջանակները և սկսել համագործակցությանը համատեղ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, ինչպիսիք են քաղաքագիտությունը, հոգեբանությունը և այլն, ինչպես նաև կնքել համագործակցության համաձայնագիր:

Այնուհետև տեղի ունեցավ հանդիպում Կրակովի մանկավարժական համալսարանի աշխարհագրության և կենսաբանության ֆակուլտետի վարչական կազմի հետ քննարկելու հետագա համագործակցության ուղիները գիտության և կրթության ոլորտներում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց մեկնարկել համագործակցությունը ասպիրանտների փոխանակմամբ և գիտաժողովների մասնակցությամբ:

Հանդիպման երկրորդ մասում ԳԿՄԿ պատվիրակությանը աշխարհագրության ֆակուլտետի ուսանողների համար ներկայացրեցին Հայաստանը, Գիտությունների ազգային ակադեմիան և Գիտակրթական միջազգային կենտրոնը, որից հետո պատասխանեցին ուսանողների բազմաթիվ հարցերին:

Այցի երրորդ օրը ԳԿՄԿ պատվիրակությունը մասնագիտական դասախոսություններ կարդաց Կրակովի մանկավարժական համալսարանի աշխարհագրության և կենսաբանության ֆակուլտետի ուսանողների համար:

«Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոս Դավիթ Պիպոյանը ներկայացրեց սննդամթերքի անվտանգության ռիսկի վերլուծության նոր մոտեցումները և երեք հիմնասյունները, մասնավորապես ռիսկի գնահատման, ռիսկի կառավարման և հաղորդակցման ԵՄ չափորոշիչները, ԵՄ սննդամթերքի անվտանգության ռիսկի գնահատման գիտական մարմնի աշխատանքներն ու դերն: Ինտերակտիվ դասախոսության միջոցով ուսանողներին ներկայացվեց ռիսկի և վտանգների տարբերությունները, ինչպես նաև ռիսկի վրա հիմնված սննդամթերքի անվտանգության համակարգի առանձնահատկություններն ու առավելությունները:

«Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի դասախոս Գայանե Ներսիսյանը ներկայացրեց քաղաքային շրջակա միջավայրի առարկայի ժամանակակից մոտեցումները, քաղաքային կանաչ ենթակառուցվածքների խնդիրները, լուծման մեխանիզմները և կառավարումը՝ ներկայացնելով ինչպես եվրոպական և ամերիկյան փորձը, այնպես էլ Երևանում այդ ոլորտում իրականացված հետազոտությունները, ինչը հավանության է արժանացել և ներկայացվել տարբեր միջազգային գիտաժողովներում և ֆորումներում:

Այցի վերջին օրը Դավիթ Պիպոյանը մասնագիտական դասախոսություն կարդաց Կրակովի ագրարային համալսարանում՝ ներկայացնելով Էկոկենտրոնի Սննդի շղթայի ռիսկերի գնահատման կենտրոնի գործունեությունը և այնտեղ իրականացվող

հետազոտությունները: Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց կնքել եռակողմ համաձայնագիր Կրակովի ագրարային համալսարանի, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի միջև՝ կրթության և գիտության միջև համագործակցությունը մեկնարկելու նպատակով:

Մշակութային իրադարձությունների թվում ԳԿՄԿ պատվիրակությունը Կրակովում գտնվող հայկական խաչքարի մոտ ԳԿՄԿ պատվիրակությունը հայ համայնքի հետ միասին հարգանքի տուրք մատուցեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին և այցելեց Կրակովի հայկական դպրոց:

Այցի ընթացքում ուսումնասիրվել են Աշխարհագրության ֆակուլտետի դասընթացների առարկայական նկարագրերը, որոնք կարող են կիրառվել Էրազմուս+ «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» կարողությունների զարգացման ծրագրի «Համալիր գեոէկոլոգիական քարտեզագրում», «Աշխարհագրական-տեղեկատվական համակարգեր (USՀ)» և «Շրջակա միջավայրի կիրառական հեռագնում» դասընթացների արդիականացման գործընթացում:

Կրակովի մանկավարժական համալսարանի Աշխարհագրության ինստիտուտ այցի ընթացքում ծանոթացել ենք մագիստրատուրայի հիմնական մոդուլների /ուղղությունների (ֆիզիկական աշխարհագրության, սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, ռեգիոնալ աշխարհագրություն, աշխարհագրական կրթություն, տուրիզմ) դասընթացների առարկայական նկարագրերին: Հետաքրքրություն ներկայացնող առարկայական նկարագրերը քննարկվել են դասավանդող դասախոսների հետ: Ֆիզիկական աշխարհագրության մոդուլի առաջին ուսումնական տարում դասավանդվում է «Աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիաներ» առարկան, որը դիտարկվել է որպես ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի մագիստրատուրայի

նմանատիպ առարկայի ծրագրի բարելավման ուղեցույց: Վերջինս մանրամասն քնարկվել է դոկտոր Պավել Ստրուսի հետ, որի հետ ձեռք է բերվել համաձայնություն շարունակել համատեղ աշխատանքները գեոինֆորմացիոն տեխնոլոգիաների և քարտեզագրական առարկաների դասավանդման առանձնահատկությունների շուրջ: <<Աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիաներ>> առարկան ունի 5 կրեդիտ, դասընթացի ավարտին ուսանողները ձեռք են բերում տարածական վերլուծության հիմնական հմտություններ, տիրապետում են էլեկտրոնային թեմատիկ քարտեզների ստացման մեթոդներին, LIDAR համակարգերի միջոցով տեղանքի եռաչափ չափագրումներին: Դասընթացը կազմված է տեսական և համակարգչային լսարաններում գործնական պարապունքներից: Վերջինիս ընթացքում ուսանողները ArcGIS ծրագրային փաթեթի միջոցով լուծում են խնդիրներ և տիեզերական լուսանկարների վերծանման միջոցով կազմում թվային քարտեզներ: Հատկապես մեծ հետաքրքրություններ ներկայացնում դաշտային պայմաններում TLS LIDAR սկանների օգնությամբ տեղանքի եռաչափ թվայնացման գործնական պարապմունքները: Քննարկումների արդյունքում որոշվեց կատարելագործել <<Բնապահպանություն և բնօգտագործում>> ամբիոնի նմանատիպ առարկաների դասավանդման առարկայական նկարագրերը՝ մեծ ուշադրություն դարձնելով հատկապես համակարգչային գործնական և դաշտային պրակտիկ պարապմունքների վրա: Ինչպես նաև խոսվեց ուսումնական ծրագրերում տարածական տվյալների վերլուծության առցանց հարթակների և վտանգավոր երևույթների կանխարգելման ԱՏՀ-ի օգտագործման վերաբերյալ դասավանդման նպատակահարմարության մասին:

Այցի ընթացքում բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի դասախոսները ծանոթացան նաև կենսաբանական ֆակուլտետի կրթական և գիտական ծրագրերին: Դեկանի կողմից ներկայացվեցին հիմնական ամբիոնները, իսկ ուսումնական մասի պատասխանատուն ներկայացրեց այն առարկաները, որոնք ներառված են նաև

ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի առարկայական ծրագրերում: Մասնավորապես ներկայացվեց սննդի թունաբանություն առարկան, որը գործում է կենդանագիտության ամբիոնի բլոկում, և հիմնական շեշտադրումը կենդանական ծագում ունեցող թույլներն են, մինչդեռ ԳԿՄԿ-ում դասավանդվող շրջակա միջավայրի թունաբանություն առարկան ավելի ընդարձակ է՝ ներառելով շրջակա միջավայրի բուսական, կենդանական, սինթետիկ և հանքային թույլները: Այնուհետև կատարվեց այց հետազոտական լաբորատորիաներ, որտեղ ներկայացվեցին նոր սարքավորումները, վերջիններիս կիրառությունը հետազոտական և մագիստրոսական կրթական ծրագրերում: Մասնավորապես HPLC բարձր արդյունավետության գազային քրոտատոգրաֆիկ մեթոդներով իրականացվող հետազոտությունները շատ հետաքրքիր էին, քանի որ «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում ԳԿՄԿ «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնը ևս պատրաստվում է ձեռք բերել քրոմատոգրաֆ և շատ կարևոր է այլ երկրների փորձի ուսումնասիրությունը՝ մասնավորապես ուսանողական լաբորատորիաների օգտագործման պրակտիկան:

ԳԿՄԿ դասախոսները Կենսաբանության ինստիտուտի շրջայցի շրջանակներում ծանոթացան նաև բույսերի ֆոտոսինթետիկ ակտիվության և քլորոֆիլ Ա և Բ պիգմենտների ուսումնասիրությանը, որն իրականացվում է Ժամանակակից մեթոդներով: Հարկ է նշել, որ նմանատիպ հետազոտություններ իրականացվել են նաև Էկոկենտրոնում՝ համակցելով վերջիններս ադոտովածության հետ: Հատկապես հետաքրքրության էին արժանի կարծր մասնիկների (PM) վերաբերյալ իրականացրած հետազոտությունները, որոնց ուսումնասիրման համար առկա էին բոլոր անհրաժեշտ սարքավորումները, ինչը որպես դիդակտիկ մեթոդ գործնական դասընթացների միջոցով մատուցվում էր ուսանողներին և ասպիրանտներին:

https://bwm.up.krakow.pl/wp-content/uploads/2019/04/Institute-of-Geography.pdf?fbclid=IwAR3EbHx3u5ET4OCHSIMsgpolX0sie_iU2m8T53tLQxUvkWfUjDVmVHXCfFk

Ուսումնասիրվել են նաև լեհերեն լեզվով առկա առարկայական նկարագրերը՝

http://geografia.up.krakow.pl/?page_id=5756

Այցի ընթացքում նաև ուսումնասիրվել են հետագա համագործակցության ընդլայնման հնարավորությունները և առաջարկվել է հետագա համագործակցությունը ընդլայնել հետևյալ ոլորտներով՝

Քաղաքագիտություն

Մոդուլ I՝ Կենտրոնական և արևելյան Եվրոպա /20 կրեդիտ/

- ✓ Հետկոմունիստական քաղաքականության և հասարակության ներածության
- ✓ Լեհական հասարակությունը փոփոխությունների գործընթացում
- ✓ Կենտրոնական և արևելյան Եվրոպայի տնտեսությունը
- ✓ Իրավագիտության ներածություն

Մոդուլ III Ժամանակակից աշխարհի արտաքին քաղաքականությունը և խնդիրները /20 կրեդիտ/

- ✓ Ժամանակակից քաղաքակրթությունների փոփոխությունները
- ✓ Ժամանակակից ռազմական հակամարտությունները
- ✓ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը
- ✓ ԱՄՆ արտաքին քաղաքականությունը

<https://bwm.up.krakow.pl/wp-content/uploads/2019/04/Institute-of-Political-Science.pdf>

Հանրային կառավարում՝ 20 կրեդիտ

- ✓ Տարածաշրջանային և տեղական կառավարումը Եվրոպայում
- ✓ Կառավարումը տարածաշրջանային կառավարման ոլորտում
- ✓ Տարածաշրջանային քաղաքականություն
- ✓ Տարածքային մարքեթինգ

<https://bwm.up.krakow.pl/wp-content/uploads/2019/04/Institute-of-Law-Administration-and-Economics.pdf>

Հոգեբանություն

Ձմեռային կիսամյակ՝ 20 կրեդիտ

- ✓ Հաղորդակցության հոգեբանություն
- ✓ Միջմշակութային հաղորդակցություն
- ✓ Համակարգչային խաղերը և սոցիալական մեդիան հոգեբանական տեսանկյունից
- ✓ Հաղորդակցման հմտությունների զարգացում
- ✓ Զգացմունքների կառավարման հոգեբանություն

Ամառային կիսամյակ՝ 20 կրեդիտ

- ✓ Ընդհանուր հոգեբանություն
- ✓ Սոցիոհոգեբանություն
- ✓ Նեյրոհոգեբանության ներածություն
- ✓ Զգացմունքների հոգեբանություն
- ✓ Մանկավարժության հոգեբանություն
- ✓ Հեքիաթները թերապիայում և դաստիարակության մեջ
- ✓ Պատմողական գերանտոլոգիա

- ✓ Իմաստության հոգեբանություն

<https://bwm.up.krakow.pl/wp-content/uploads/2019/04/Chair-of-Psychology.pdf>

Տնտեսագիտություն՝ 20 կրեդիտ

- ✓ ԵՄ տնտեսական, իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը
- ✓ ԵՄ էներգետիկայի և կլիմայի քաղաքականություն
- ✓ ԵՄ բյուջեն և ֆինանսական միջոցները
- ✓ Միջազգային հաշվապահություն

<https://bwm.up.krakow.pl/wp-content/uploads/2019/04/Institute-of-Law-Administration-and-Economics.pdf>

Հետազայում հնարավոր է նաև ընդլայնել համագործակցությունը ինֆորմատիկայի և պատմության ոլորտներում:

<https://bwm.up.krakow.pl/wp-content/uploads/2019/04/Institute-of-Computer-Science.pdf>

<https://bwm.up.krakow.pl/wp-content/uploads/2019/04/Institute-of-History-and-Archival-Studies.pdf>

Արտագնա ուսանողները պարտավոր են ընտրել մեկ ամբողջական մոդուլ և երկու հարակից առարկա այլ մոդուլներից

Դասընթացները առաջարկվում են, եթե այս դասընթացներին գրանցվում են երեք և ավել ուսանող

Գնահատման համակարգ՝

Գնահատական	Նկարագրություն
------------	----------------

5,0	Համարժեք է A -ին
4+	Համարժեք է B -ին
4,0	Համարժեք է C -ին
3+	Համարժեք է D -ին
3,0	Համարժեք է E -ին
2,0	Համարժեք է F -ին

Ակադեմիական օրացույց

Ուսումնական տարին մեկնարկում է հոկտեմբերի 1-ին և ավարտվում է հունիսի 30-ին, բաղկացած է երկու կիսամյակից (ձմեռային և ամառային)՝ յուրաքանչյուրը՝ 15 շաբաթ: Քննաշրջանները անցկացվում են հունվարին և հունիսին: